



2021-2022 ուստարվա «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի  
Ուսանողական խորհուրդի կատարողական զեկույց

- Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում:** Հաշվետու ուսումնական տարում Ուսանողական խորհուրդի կողմից «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում 2021 թվականի սեպտեմբերի 6-ին կամակերպվեց գիտելիքի և դպրության օրվան նվիրված տոնական միջոցառում: Ինչպես միշտ, առաջին կուրսեցիներին և քոլեջի մյուս կուրսերի ուսանողներին ողջունեցին Քոլեջի տնօրենը, տնօրենի տղակալը և Ուսանողական խորհրդի նախագահը: Միջոցառման ընթացքում ուսանողական խորհրդի նախագահը ներկայացրեց Քոլեջի ուսանողական խորհրդի գործունեությունը, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:
- Ուսանողական խորհրդի նոր կազմի, հանձնաժողովների ձևավորում, նախագահների ընտրություն և հաստատում:** Տնօրինական խորհրդի 27.08.2021թ. նիստում հաստատվել է Ուսանողական խորհրդի խորհրդի նոր կազմը, ինչպես նաև Ուսումնական աշխատանքների և Կառավարչական աշխատանքների հանձնաժողովների կազմերը: Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական խորհուրդը և հանձնաժողովները ակտիվ մասնակցել են Քոլեջում իրականացվող բոլոր միջոցառումներին, մասնավորապես՝ ուսումնական գործընթացի բարեփոխումների, դասալսումների կազմակերպմանն ու անցկացմանը, ուսանողների հետ տարվող աշխատանքներին և այլն: 2021-2022 ուստարվա ընթացքում, հաշվի առնելով 44 օրյա պատերազմը Ուսանողական խորհուրդը հրավիրել և անցկացրել է թվով 3 նիստ, որի ընթացքում քննարկվել են Քոլեջի ուսումնական և կառավարչական տարբեր հարցեր, կայացվել համապատասխան որոշումներ:
- Առաջին կուրսեցիներին ծանոթացնել Քոլեջին, Ուխտ գործառույթներին և կազմին:** Ուսանողական խորհրդի նախագահի գլխավորությամբ սեպտեմբերի 19-22 կազմակերպվել են ճանաչողական շրջայցներ Քոլեջի լսարաններով, հանդիպումներ Քոլեջի անձնակազմի և ավագ կուրսերի ուսանողների հետ: Ուսանողական խորհրդի

քարտուղարը, ուսանողական խորհրդի անդամները առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրել են Ուսանողական խորհրդի գործառույթներին, հանձնաժողովներին և Քոլեջի ներքին կարգապահական կանոններին:

**4. Հանդիպումներ ուսանողության հետ՝ ըստ մասնագիտական խմբերի:** Համաձայն պլանի կազմակերպվել են ընդհանուր 4 հանդիպում-քննարկումներ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են պլանով նախատեսված միջոցառումներին առնչվող հարցեր, ինչպես օրինակ.

- Քննարկվել են Քոլեջի ՈԱ պատասխանատուի կողմից մշակված մի շարք ընթացակարգեր, որից հետո Խորհրդի կողմից տրվել են համապատասխան երաշխավորություններ ուսումնասիրված փաստաթղթերի վերաբերյալ:
- ՈԱ պատասխանատուի և ուսումնական մասի կողմից իրականացված առցանց հարցումների արդյունքերը հանգամանորեն քննարկվել են Խորհրդում և ներկայացվել Տնօրինական խորհուրդ և այլն:

**5. Կուրսերի ավագների հետ գործող հարցումների, կարգերի և ժամանակացույցի վերաբերյալ քննարկումներ:** Ուսանողական հարցումները, կարգերի և ժամանակացույցերի հետ աշխատանքները կազմակերպվել են ամբողջական: Ընդհանուր առմամբ 2021-2022 ուստարվա ընթացքում ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվել և անցկացվել են 3 տարբեր հարցումներ: Արդյունքները լսվել են Խորհրդում և տրվել համապատասխան երաշխավորություններ: Պլանավորվում է 2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպել ևս 3 հարցումներ: Նախատեսվում է անցկացնել հարցումներ գնահատելու Քոլեջում վերջին մեկ տարվա բարելավումները և ձեռքբերումները:

**6. Մասնակցություն կառավարման մարմինների նիստերին:** Համաձայն Քոլեջում գործող կառավարման մարմինների ներքին նորմատիվ փաստաթղթերի Ուսանողական խորհրդի անդամները ակտիվ մասնակցել են Քոլեջում գործող բոլոր խորհուրդների նիստերին, մասնակցել որոշումների կայացմանը և այլն: Ուսանողական խորհրդի նախագահը լինելով Քոլեջի Ընդհանուր ժողովի և Տնօրինական խորհրդի անդամ մասնակցել է բոլոր նիստերին: Ուսանողական խորհրդից երկու ուսանողներ ընդգրկված լինելով Մանկավարժական խորհրդի կազմում մասնակցել են հրավիրված բոլոր նիստերին:

**(Հիմք՝ խորհուրդների կազմերի հաստատման հրամաններ):**

**7. Վերանայել դասավանդման և ուսումնառության ընթացակարգերը:** 2021-2022 ուստարվա ընթացքում ՈԱ պատասխանատուի և ուսումնական մասի հետ համատեղ վերանայվել են Քոլեջում գործող 4 մասնագիտությունների կրթական ծրագրերի առարկայական/մոդուլային դասընթացների ծրագրերը: Մշակվել և հաստատվել են դասավանդման և ուսումնառությանն առնչվող մի շարք նոր փաստաթղթեր: Մշակվել և 2021-2022 ուստարվանից շրջանառության մեջ է դրվել Քոլեջում հետազոտական աշխատանքների կազմակերպման կարգը:

**(Հիմք՝ նոր փաստաթղթերի ցանկը):**

**8. Դասալսումների և քննարկումների մասնակցություն:** 2021-2022 ուստարվա ընթացքում ուսումնական մասի կողմից կազմակերպվել է թվով 14 դասալսում: Դասալսումները կազմակերպվել են Քոլեջում գործող համապատասխան կարգով, որի պահանջներից է նաև դասալսող հանձնաժողովի կազմում առնվազն մեկ ուսանողի առկայությունը: Ընդհանուր առմամբ ուսանողները մասնակցել են 14 դասալսումների և քննարկումների:

**12. Արտալսարանային հանդիպումներ դասախոսների հետ:** 2021-2022 ուստարվա ընթացքում ուսանողական խորհուրդը դասախոսական կազմի հետ ունեցել է ընդհանուր 4 հանդիպում, որի ընթացքում քննարկվել են ուսման վարձավճարների հավաքագրման, քննաշրջանի նախապատրաստական և պրակտիկաների կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ հարցեր:

**13. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում:** 2021-2022 ուստարվա ընթացքում հիմնադիր Մ.Նանյանի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ Քոլեջի բոլոր աշխատակիցները ստացան նվերներ, իսկ Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվեց ասմունքի ցերեկույթ:

**14. Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառում:** Քոլեջի տնօրենի աջակցությամբ Դասախոսների ուղեկցությամբ Ուսանողական խորհրդը ուսանողության հետ միասին կազմակերպեց այցելություն Յեղասպանության հուշահամալիր և ծաղիկներ խոնհարեցին անմար կրակին:

**17. Քոլեջում կանաչ անկյան ստեղծում:** 2022-2023 ուստարվան ընդառաջ Քոլեջում իրականացված վերանորոգման արդյունքում ձևավորվեց փոքրիկ կանաչ անկյուն, որն հիմնադրի առաջարկով աստիճանաբար պետք է ընդլայնել:

**18. Ընդլայնել համագործակցությունը տեղական և միջազգային ՄՈՒՀի և կազմակերպությունների հետ:** Քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի անմիջական կապերի շնորհիվ 2021-2022 ուստարվա ընթացքում կնքվել են երկու համագործակցության պայմանագրեր՝ Բելառուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քոլեջների հետ: Ներկայումս Ուսանողական խորհրդի կողմից աշխատանքներ են տարվում կապեր ստեղծել այդ քոլեջների ուսանողների հետ:

**20. Աշխատանքներ տանել ուսանողական գիտական կառույց ստեղծելու ուղղությամբ:** Այս ուղղությամբ արդեն իսկ իրականացվում են հստակ միջոցառումներ, ՈԱ պատասխանատուի ղեկավարությամբ: 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորվածան ժամանակ երկու ուսանող ներկայացրեցին իրենց ավարտական աշխատանքները: Նման մոտեցումը 2022-2023 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորվածան ժամանակ նախատեսվում է հասցնել մինչև 6 աշխատանքի:

***Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա. Խուդաթյան***